գեանց, բարեսէր երեք եղբարք, որդիք Խաղայի՝ Սուլուխան, Ալ և Հրապ, եկեալ ի սուրբ ուխտս, յաւուրս Փիլիպպոս Պաթողիկոսի, տեսեալ սոցա զասուածահաճոյ կենակցութեամբ զաղգաւոր միաբանութիւն երկնաքաղաքացի Հարանցն, և զխանգարումն շինուածոց, և զանընչութիւն ընաշխարհայնոց, ջերմեռանդ յաժարութեամբ յարդար վաստակոց իւրեանց ձեռնարկեալ շինեցին վերանորոգմամբ, որպէս զՏաճարսն, նոյնպէս և զհարկաւոր յիշատակիսն, զորս ի կարգի յիշատակեացն ունիմք գրել յանուանէ յիշատակաց տուողացն, որքան ստուգելն ինձն կարևորք։

Մ՝իայն այս բարեպաշտ Սուլուխան և եղբարքն, ի միում փոքր տետրակի տեսանի՝ թէ զկնի նորոգութեան տաճարացն, այլև զերիս կանթեղս մշտավառս խոստացեալ են թողուլ, և յամ յամէ՝ զձէթ կամ զձիթագինսն տալ, այժմ այդ գինք ձիթոյն՝ թէ ոչ ի կայից յիշեալ բարեպաշտ

ուխտող Զիթաղեանց, բայց ի հասարակ աստուածապաշտ և բարեսէր ժողովրդոց ժողովին, ոչ թէ երեք, այլև բազում կանթեղք զցայգ և զցերեկ յամենայն ժամերգութիւնս լուցեալ վառին։

Երձանագրութիւնք յանուն սոյն Զիթաղեանց, որք կան յորմունս յիշեալ եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի և Առաքելոց, բովանդակին ի սոյն միտս, որ ինչ ի վերոյ գրեցան. վասնորոյ և ոչ երկրորդեմք զշարադրութիւն նոցա, զի անյարիւք են և լինի աւելորդ կրկնաբանութիւն։

Բայց գտանին ի վերայ Առաքելոց Տաճարի երկու ընկուզեայ դրունք արևմտեան և հարաւային կողմանց, որք յոյժ զարմանալի ճարտարապետական նկարուք և հիանալի փորուածովք իբր քերուբ զետ ասղանի յօրինեալք ի հնագոյն ժամանակաց։ Պանաւանդ հարաւային դուռն՝ կարի առաւել ճարտար մտաց և շնորհակերտ ձեռաց ներտպութիւնք են. նմին իրի և վնացին մակագրութիւնսն, որ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ի շրջապատ իւրաքանչիւրոցն գլխագրով գրեալ են ի նոյն ճարտարաց՝ արժան համարիմ առանձնօր նոյնութեամբ առեալց և բառիցն գրել։

Նախ յարևմտեան դուռն, որ հնագոյն է՝ գրեալ է այսպէս. «Ի թուին Հայոց ՈՒՆ, նորոգեցաւ դուռն սուրբ եկեղեցւոյս, հրամանաւ Իշխանաց Իշխան Վրդին, և ձեռամբ Յովհաննիսի հիւսանն. որք ընթեռնուք, յիշեսջիք»։

Հարաւային դրան արձանագիրն է ի ձեռագրատանն այսպէս. «Ջ. Հ. Ս թուականին, երեսուն և հինգ թիւ աւելի յԱթոռակալութեան Տեառն Սարգսի, ի խնամութեան Զրուպ պէկի, ծաղկեցաւ դուռս Տաճարս, Առաքելոցն Պրիսատոսի, հրամանաւ սուրբ վարդապետի, եռամեծիս Դանիէլի, և սիրելի որդւոյ սորին Եպիսկոպոս Տէր Ներսիսի, ձեռամբ սորին աշակերտի՝ անարժանիս Աբրահամի, նաև եղբօր մեր սիրելի շնորհաք ի լի Գրիգորի. յաստս անկանիմ ամենայնք, հայցել Տեառ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նէ պարդև ձրի, բարեբնակութիւն հաստատ ապգի և ծնողացն իւրոց բարի, Պարապետ քահանայի և մօրն Համբարձումի։։

Որքան տեսանին, թէ՝ արիւմտեան դըրան թուականն էրան Փրկչականին 1176 և հարաւային 1857։ Յառաջնոյն մինչև ցայժմ՝ յոլովմ ունք 1830 ամի Տեառն՝ անցեալ են 654 և յերկրորդին 278։ Ուստ ջինն ժամանէ յաւուրս Գրիգորիս Կաթուղիկոսի և Կիր Մանուէլ կայսերն։ Եւ երկրորդի ժամանակն հասանի Ի Բարսեղ Կաթուղիկոսի Հայոց, Օսմանցւոց աէրութեան Սուլթան Սուլէյմանի, և Պարսից Շահ-Թահմազին, որ յայն աւուրսն աւերելով զԵրևան, Նախիջևան, նահանգքն էառ ի ձեռաց Օսմանցւոց. և զկնի եկեալ զօրաց Սուլթան Սուլէյմանին՝ վերստին էառ յետս ի Պարսից։

Ասց ի յայս երկու դրանց արձանագրութեանցն, այլ ուրեք ի պատմութեանց ոչ ելին մեզ ընդ յառաջ, թէ՝ Գուրդ Եշխանաց Եշխան ուստի՞ կայր ԱԻՆ թը-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուին (1). զի թէ՝ զԲուրդ Իշխանն Սիւ-
նի քան ցանկի պատմութեանց, իբր երկրորդ հատորի 401 թղթահամարի՝ լինիլ

(1) Ի 1815 ամէ հետէ Հայազգի ոմն Մելքոն անուն՝ եկեալ աստ ի Տփխիսայ վարէր զճգնաւորական կեանս, զամենայն ժամանակս կենացն միաժամ պահելով և ճաշակելով զչորաբնակ հաց և ջուր։ Այրս այս՝ որ Մելքոն ճգնաւոր կոչիւր, ընդ խստրմբերական կենացն՝ նաև, զցայգ և զդերեկ առաւել պարապէր ի մշակական աշխատութեան։ Սա երբեմն սուրբ Յարութեան Տաճարին որ ի գլուխ լերին կղզւոյս, և որ թաղեալ էր ընդ հողով խորագոյն, և ի հիմանէն վերականգնել կամէր զնոյն եկեղեցի, զոր և կարէր իսկ հայթայթելով, սակայն վախճանն նորա խափան եղ գործոյն։ Եւ որպէս զշրջապատս սոյն Յարութեան Տաճարին, նոյնպէս և զշրջապատս սուրբ Առաքելոց և սուրբ Կարապետ Տաճարացն հարեաց և ընդարձակեաց, զթանձրութիւնս հողոյն և քարին թիկամբն իւրով միայնակ կրելով և հեռացուցանելով ի բաց, որով և ի գլուխ լերինն մեծաւ մասամբ ամբիոնաձև յարդարելով տափարակավայրս, որ բազմաճիգն աշխատանաց է գործ. յոր ջանասիրեաց այրս այս բարեվաստակ և բա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պարտ էր Վռուրդ անուն Իշխան Սիւնի, զոր մեք ի նշանակեալ տեղին ոչ գտաք զայդ անուն, թէև՝ գտանէաք անդ՝ ժամանակաւ յառաջ լինէր, զի անդ ՝այոց

բեխորատ՝ ընդ ձայս կենաց իւրոց զամն 40ի. չափ. որով և և գեղեցկայարմար շքեղացոյց զդրուխ լերինն՝ որ յառաջն լեալ է աւերակ և մացառախիտ, որպէս վկայեն ականատես ծերունիք ի միաբանաց անապատիս։ Նոյնպէս շինեալ է սա անձամբ անձին ճարտարարուեստութեամբ ի շրջապատ սուրբ Առաքելոց և սուրբ Կարապետ Տաճարացս զբազմաեռնեակ ընակարանս բաղկացեալս ի խրճթաց և ի սրահից, նաև զփայտաձեղուն գաւիթ Առաքելոց Տաճարիս։ Ի շինել սորա զայս գաւիթ ի բառնալն զհողն յատակին՝ երևեալ է ի միջավայրի գաւթին գերեզման սոյն Իշխանաց Իշխան Պ. Քրլին, որ ծածկեալ կայր և էր անյայտ յաւուրս սոյն պատմագիր Մանուէլ վարդապետին։ Ահա տապանագիրն նորա։

ԱՅՍ Է
ՀԱՆԳԻՐ
ՍՏ ՊԱՐ-
ՈՆ ՔՈՒՐ-
ԴԱՑ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թիւն ՌՃԼԲ գրէ, իսկ այս Գրդի թիւն ՍԻՆ արձանագրեալ է։

Նոյնպէս Գանիկի և Գերսէսի պատմութեանցն ոչ պատահեցայ։ Ամենախոնարհաբար խնդրեմ՝ զի գտանող՝ արք, կամ եղբարք զպակասութիւնն մեր լցուսցեն, որպէս և ի սկզբան սոյն գրուածոյս խնդրեալ եմ։

Վասն ճգնաղգեաց առնս այսորիկ Մելքոնայ՝ սոյն Մանուէլ վարդապետն ի վերջ պատմութեանս, ի յիշել զանուանս ժամանակակից միաբանաց անապատիս՝ գրէ այսպէս. «Մելքոն Թիֆլիզեցի, բազմարուեստ, արի և անձանձիր աշխատաւոր, ի շինուածս վանուց հիւսնութեան, որձաղրութեան, մնմակաղմնութեան, և յարակայ պարտիզպանութեան և խաւարտեղինաց անպակաս աշխատաւորութեամբ, բուսականացուցանող ամենեցուն, յետ այսպիսի անդադար աշխատանացն յեօթնեակ կարգս ժամերգութեանց անպակաս աղօթաւոր, քաղցրաձայն դպիր և անթերի սաղմոսերգու, առ որ ասել զարդ անապատի, ոչ է սխալելի, և իմ հոգւոյս փարելի»։

Գոտի թէպէտ զՍարգիս վարդապետ մի Ընտաջնորդ Սէվանու, յաւուրս Գրիգորի Մագիստրոսի (1044, ԹՎ ՆԳ)՝ իմաստասէր և լեզուագէտ, առ որ գրէ Մագիստրոս այսպէս. "Եւ կարօտիմք քեզ մերձենալոյ մեզ յօգնականութիւն այսպիսում իրողութեանց, ապա թէ ոչ, աղօթիւք օգնեսցես մեզ,,։

Եր և Սարգիս վարդապետ մի Սէվանեցի յաւուրս Զաքարիայ Իշխանի (Սպասալարի) վասն քննութեան Սսոյ ժողովոյն ընդ այլ ՝արց ժողովեալ էին ի Լօռի քաղաք, ոլք անմիաբանք եղեն ի մէջ ժողովոյն. բայց անդանօր ի Լօռու Խաչատուր վարդապետն առաջի մնացեալ բարեմիտ հոգևորականաց և Զաքարիա Իշխանին երգեաց զՀրաշալին զայն երգ "Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն,,. և յայնմ՝ օրէ մնաց յամենայն եկեղեցիս մեր զայս խորհրդակուռ երգս երգել ի զգեստաւորել պատարագամատոյց ժամանակաց։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ղեռալ է և Կարապետ Եպիսկոպոս մի Էջմիածնեցի Բաջնորդ սոյն Սեվանու, փախուցեալ ի Մէլքիսէթ Կաթուղիկոսէ, յարեցեալ ի Սարգիս Եպիսկոպոս, որ զարգացեալն էր յանապատին Միւնեաց, և նորոգեալ զայս վանօրայս և զմենաստանս, զի իմ և զԿուտուց և զայլ անապատսն, զորս և աստուածահաճոյ կարգագրութեամբ ծաղկեցոյց. յորմէ ուանալ և Կարապետ Եպիսկոպոս, բարեկարգեաց զանապատն Սեվանու

Որպէս յառաջագոյն խոստովանեալ եմ, վասն ոչ գտանելոյ իմ ասա հնագոյն հեղինակ պատմութեանց, ունիմք յետ և յառաջ սայթաքել, մինչ զելս մեր շաւղաց գտցուք։ Բանզի ներկայ հարքն կամէին ցուցանել մեզ թէ ի Աշտոց վարդապետէ սկսեալ՝ Բարսեղեան կանոնիւք վարեցեալք են միաբանք Սեվանու մինչև ցայժմ, բայց յոյժ բարեգոյն է ասել, յիրաւի յառաջն Աշտոցիւ՝ այն Բասիլեան կանոնք մտեալ են ի Սեվան, սակայն

յանցանել ժամանակաց և ի փոփոխել Տէրութեանց և ամայութեանց վանօրէից, ամենայն բարեկարգութիւնք՝ վեր ի վայր տապալեալք և անյայտ մնացեալ էին, մինչև ի (ժամանակս) Սարգսի Եպիսկոպոսի և հետևողացն նորա, որ սկիզբն արար ի Սիւնեաց գաւառ ի Մաքենիս կոչեցեալ վանուց, ուր և Մաշտոց վարդապետ զառաջինն անդ էր զարգացեալ և սնեալ։

Այս Սարգիս Եպիսկոպոս՝ սկիզբն էր առաջնորդ Սաղմոսավանից, ի նոյն գաւառէ Արագածոտան, ի գեղջէ որ ասիւր Յաքենի, մերձ ի Պարբի, որ և մինչանուամբ Պարոն-Տէր կոչիւր սոյն Սարգիս Եպիսկոպոս։ Երաշալի պատահմամբ իւիք և ինքքն հրաժարեալ յԱռաջնորդութենէ իւրմէ, գնաց ի սուրբ Երուսաղէմ. պատահեալ ի ճանապարհի, Տրապիզոնի Կիրակոս անուն Քահանայի միոյ, առն առաքինասիրի, ընկերացեալ միմեանց խորհին՝ ի վերադարձի իւրեանց ի պատշաճ տեղւոջ մենարանս հաստատեալ աղօթեսցեն ընդ-

կերակցաբար, ըստ գրութեան Առաքել պատմչի ԻԱ։

Որք եկեալք ի Միւնեաց գաւառ հիմնարկեցին զԱստուածահաճոյ բաղձանս իւրեանց. և օր ըստ օրէ յաջողի ըստ կամաց իւրեանց, եկեալ բազմութեանց հոգևորականաց և աշխարհականաց յարին ի սոսա ջերմեռանդ սիրով. նմին իրի միաբան խորհրդով Սարգիս Եպիսկոպոս և Կիրակոս Քահանայ եօթն զլուխ կանոնական բարեկարգութիւնս սահմանեցին կրօնասիրութեան իւրեանց, որք են այսոքիկ։

Առաջին քան զամենայն, յամենայնի հնազանդ լինել Առաջնորդին։

Երկրորդ՝ յամենայն աւուր յայգոյն և յերեկոյին զխորհուրդս մտաց և զյանցուածս աւուրն խոստովանել։

Երրորդ՝ ոչ ունիլ ումեք առանձին ստացուած ինչ, և ոչ պահել ինչ ի սենեկի, և ոչ ուտել բնաւ անդէն, յանձն արարեալ զամենայն խնամն՝ նախ յԱստուած և ապա յԱռաջնորդն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Չորրորդ՝ զամն ողջոյն պահօք անցուցանել, բայց յաւուրց կիւրակէի և շաբաթու և տէրունական տօնից. իսկ ի մսոյ և ի գինւոյ խպառ հրաժարիլ։

Հինգերրորդ՝ յաւուրն միանգամ ճաշակել, և հաւասար բաժանել զկերակուրն մեծի և փոքու, և ընթեռնուլ զգիրս խեղանի։

Վեցերրորդ՝ յամենայն շաբաթս և ի Տէրունական տօնս զգիշերն հսկմամբ անցուցանել, և յառաւօտուն անխափան պատարագ մատուցանել։

Եօթներրորդ՝ ի հարկանել կոչնակի, ամենեցուն միաբան գնալ յեկեղեցին և ի սեղան, լռութեամբ և խոնարհութեամբ։

Եւ ի վեր քան զամենայն, իբր գլուխ ամենայն կանոնաց եղին զայս, այսինքն է ամենեցուն ջանալ սուրբ պահել զմիտս իւրեանց և ձգնել ի մեռուցումն ախտից, ի խոկումն աստուածային իրաց և յընթերցումն գրոց։

Եղին և կարգ և ձև ի կրօնաւորական աքէմս, զի խանգարեալ էր այն, և յօրինե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցին զեկեղեցական զգեստս, ըստ իւրաքանչիւր աստիճանի, և որոշեցին զժամանակ պաշտամանց իւրաքանչիւր ժամակարգութեանց. սահմանեցին և զայլ բազում բարեկարգութիւնս, որովք կառավարին ցայսօր ամենայն կրօնաւորաց վանօրայք Հայաստան աշխարհի, մինչզի ի Կուտուց և ի Լիմ հռչակեալ Ընապատքն և՝ յընկերաց և ի դաստիարակելոցն ի սոցունց ուսան զկրօնաւորական վարս։

Վանզի Ղերսէս Մոկացի, որ մականուամբ Պեղլու կոչիւր, գնաց ի գաւառն Վասպուրականի (1622, Ի՝Հ.), և մտեալ ի կղզին Լիմ կոչեցեալ, նորոգեաց զվանան, և ժողովեաց անդ զբազմութիւն առաքինի անձանց, և առաջնորդէր նոցա ըստ նախակարգեալ կանոնաց. և ի բազմանալ կրօնաւորաց, անցին և ի Կուտուց, ուր և ժողովեցան կրօնաւորք բազումք։

Սոցին նման և Կարապետ Եպիսկոպոս յետ ամաց ի՛ չեկեալ ի Սէվան կղզի՝ բարեկարգեաց ըստ վերոգրեալ կանոնաց։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բայց է թէ՝ Մխիթար Եպիսկոպոս և Դարսեղ վարդապետ և այլք՝ ի սոյն Կարապետ Եպիսկոպոսէ ուսեալ են զկրօնաւորութիւն (1654 Ռ՚Պ՚), զորս ի վեր անդր յիշեցաք, և զնորոգութիւն տաճարացն ի Զիթաղեանց յերից բարեպաշտ եղբարց։ Վանզի ժամանակ Կարապետին յառաջ և մերձաւոր է սոցա, որով հաստատի հեղինակ լինիլ նորա՝ սոցա։

Եւ ի վերայ այսր ամենայնի տարակուսելի մնացին Ընթուակալութիւն Տեառն Սարգսի և իշխանութիւն Ընդուպ պէկի. վասնզի թուական Ընդուպ պէկին Երևանու սկսանի ի ՊՁԹ-էն, իսկ արձանագրութիւն հարաւային դրանն է Ջ.Ն. և Ի.Ն սուելի, որ լինի Ռ.Օ. ուստի եղև մեզ անգիտելի և տպադայ հետևողաց տաժանելի։ Օ.ի թէպէտ պատմիչն՝ միայն զԴարսեղ Եպիսկոպոսն դնէ (պատճառ) վերստին շինութեան, բայց մեք յարձանագրութեանց ի յորմս տաճարաց տեսանեմք, որ Մխիթարն նոյն ժամանակի, Ակ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վանու անապատի Եպիսկոպոսն է, և Բարսեղն երկրորդ կամ Ը+Ի (փոխանորդ) նորին Մխիթարայ, վասնորոյ մեք վասն շինութեան զերկուսն ի միասին գրեցաք։

ԳԼՈՒԽ Ե

Զգալի պատահմունքն Բարսեղ վարդապետին Սեվանու։

Բայց զգալի անյաջող դիպուածն սոյն Բարսեղ վարդապետին աստանօր ուրոյնաբար գրեմք առեալ յԱռաքել պատմէ (Ն՝Ն) և ի Ղամշեանէ (Գ՝. 648), որ ասէ այսպէս. "Եւ Բարսեղ վարդապետ Առաջնորդ Սեվանու՝ արար նորոգութիւն ինչ ի վանս. և ապա պատահեալ աղետալի իմն դիպուածոյ՝ մեռաւ։ Գանգի ի թուին Հայոց ՌՃԹ՝, յամսեանն Ապրիլի եղև յայնոսիկ կողմանս անակնուն ելի ցուրտ սաստիկ յոյժ, որով սառեցաւ ծովն Գեղամայ, մինչ բնակչաց կղզւոյն Սեվանայ շրջել համարձակ ի վերայ սա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռինն. և ի թուլանալ ցրտոյն թուլացաւ փոքր մի և սառնն, որոյ աղագաւ ոչ նաւել կարէին և ոչ ի վերայ սառին շրջել զօրէին, և ի պիտոյից կարեաց պակասեալ տարակուսէին, խորհեցան ապա ջարդել զթուլացեալ սառնն և այնու բանալ ճանապարհ։ Ամին իրի Խարսեղ վարդապետ էառ ընդ իւր զԷբեղայ մի և զԱրկաւադ մի և զերիս աշխարհականս, և մտեալ վեցեղունց սոցա ի փոքրիկ նաւակ (1), սկսան խորտակել զսառն և բանալ ճանապարհ՝ և ընդ անցանել իւրեանց յառաջ, հատուածք սառինն, որք ի յետուստ մնային, վերստին եկեալ առ միմեանս կցէին։ Եւ իբրև հասին նոքա ի կէս ծովուն, սկսաւ շնչել հողմ ուժգին և ցրտագին ի յետ կուսէ. զոյն տեսեալ նոցա՝ փութացան դառնալ յետս, բայց ոչ կարէին, մի՝ զի հողմն ընդդէմ էր, և երկրորդ՝ զի ճա-

(1) Փոխանակ ասելոյ զլաստ, վասնզի յայնժամ ոչ գոյր նաւ, այլ լաստիւ վարէին, ոլոգէս պատմեն միաբանքս։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:22 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նապարհ նոցա փակեալ էր և ոչ գոյր նոցա զօրութիւն վերստին բանալոյ, ոչ յայսկոյս և ոչ յայնկոյս։ Եւ յառաւել ևս ստստկանալ հողմոյն սկսան ճօճալ զնոքօք հատուածք սառինն և յենուլ ի վերայ նաւակին, և վտանգել զնա. և ապա ի յաճախել շարժմանն շրջեցաւ նաւակն, և ծածկեցաւ ի ներքոյ հատուածոց սառինն և սուզաւ ի ծով, յորմէ երկու ոգիք միայն ապրեցան, այսինքն Պարկաւագն և աշխարհական մի, իսկ այլքն հանդերձ Ուռաջնորդաւն ընկղմեցան։ ,,

Այս վերոգրեալ բանք պատմչաց՝ զԿարսեղ վարդապետն որպէս Ուռաջնորդ ցուցանեն վասն պատահեալ դիպուածոյն. բայց յարմարագոյն է Փոխանորդ կամ վէքիլ ճանաչել. որովհետև՝ Մխիթարն ըստ ցուցանելոյ արձանագրութեանց, պատուաւոր Եպիսկոպոս և Ուռաջնորդ ճանաչի, և զկնի անյաջող դիպուածոց Կարսղին, տակաւին Մխիթար վարեալ է զՈռաջնորդութիւն իւր ի Սէ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վան, ըստ վկայութեան այլում արձանագրութեան։

Նաև յաւուրս այս Մխիթար Առաջնորդի և Աբրայ Մխիթար վարդապետ հեղինակն Ա. Էնեռակեցւոց եկեալ է ի մանկական հասակին (ի Սէվան) յուխտ, ըստ պատմութեան վարուց նորա, և վասն փակեալ աչաց նորին հրաշիւք սուրբ Աստուածածնի տաճարին Սէվանու Ղուսաւորելոյն՝ երգեալ է ասա "Մինչ կոյրն էի խնդրեցի, զի ի Կուսէդ լոյս տացի,, և այլն։

Իսկ Մխիթար Եպիսկոպոսն ղկնի Բարսղի ծովակուր լինելոյն, Ընդրէաս վարդապետի վէքիլութեամբն, որպէս տեսանի ի մէջ ողջունագրի իւրոյ առ Թովիլիսու մեյսաղն Իշխանան, վասն յիշատակ տուեալ խանութացն, որ ի միասին ընդ Ընդրիասին գրեն զայն գիր՝ վարեալ զամս ձիգս զառաջնորդութիւն իւր վախճանի յամի Տեառն 1695, ՌՃԽԴ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Զ.

Զկնի Մխիթարայ Անպիսկոպոսին յաջորդոց և դիպուածք նոցին։

Յետ Մխիթարայ յաջորդեաց Մարտիրոս Եպիսկոպոս Զէրքէզեանց ի Ծաղկոցաձորոյ, ի Հարիզ գեղջէ, միաբան սրբոյ Էջմիածնի, այր տնարար և բարեկարգ. յաւուրս սորա սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ տանիսն սրբատաշ սալայատակ ծածկեցեալ է, որ ի միում արձանի գրի այսպէս. "Հնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս իւր գանձովն։ Ի Հայրապետութեան Տեառն Պարսուս, և յառաջնորդութեան Մարտիրոսի. Աստուած ողորմի ասացէք սուրբ և ողորմութիւն տուողացն սուրբ տանս և աշխատողաց։" Որովհետև շարժն յանձնէս պատահի յայս կողմ, յիշեալ սալայատակն իսպառ խախտեալ է յառաջքան զայս գրութիւն քանի ամօք, որ հիւսիսակողմն առաւել վնասաւոր լինելոյն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զանձրևային և զձեանց ջուրսն ի ներքս հեղուս։ Բարքն ժամանակիս ցանկան ի նորոգել, եթէ ոչ պակասէր յինքեանց հարկաւոր նիւթք և դրամ։

Եւ զկնի յիշեալ Պարտիրոսին, Տեղակալ նմա եղեալ է Յովհաննէս Վարդապետ ի Գեղարքունւոյ՝ Նորադուզ գեղջկ. զորմէ համբաւեալ է, իբր՝ Նարեկեան մատեանն աղօթից ծայրէ ի ծայր ի բերան ունէր որպէս զամբարձի։

Իբրև սպանաւ յիւրոցն Մահմատ-դուլի-խան Նատր-շահ կոչեցեալ, հակառակեալ իրերաց Պարսիկք և Աղուանք՝ գերէին զսահմանս միմեանց, մանաւանդ զՀայաստան (1747 ՌՃՂԶ.), մինչդի՝ թիւ ելուզակացն առաւելեալ քան զտասն հազարս, որոց գլխաւոր էր Ազատ-խան կոչեցեալն, որ քանիցս աւերեցին զՀայաստան։

Եւ ապա ի կրկին անգամ անյաղթաբար արձակել կամելն անօրինաց, լուեալ գաւառականացն, ժողովին ի մէջ կզբ-դյա,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իրբ յամրոցի անմատնելոյ։ Յորս էին և երևելիք ոմանք, որպէս Մելիք Սարգիսաճանն Գեղարքունւոյ, և Ալլահվերտի Իւզբաշին, այն ինքն է հայր Գաբրիէլ Իւզպաշւոյն, յորժամ և Գաբրիէլն էր մանուկ հասակաւ, շուրջ զամաւ Փրկչին 1747 (ՌՃՂԶ), և ի 5ն Յունվարի, այն ինչ վասն ցրտութեան եղանակին ջուրք ծովուն վասն քաղցրութեանն սառուցեալք էին։

Ցնսեալ եկուզակացն զգաւառն թափուր ի բնակչաց, տրտմին անյոյս մնալոյն յայն նուագ. ապա հայեցեալ ի կղզին տեսանեն զբազմութիւն արանց և կանանց մանկտեօքն հանդերձ ժողովեալք բացութեայ։ Յայնժամ ուրախ սրտիւ թշնամիք պատրաստին դիմել ի վերայ սառինն գալ և գերել զնոսա. յորում ժամու յերեկոյեան Ղրագալուցի՝ և Յովհաննէս վարդապետն մատուցանէր զմեղսաքաւիչ հրաշալի պատարագն ի գագաթան կղզւոյն յեկեղեցւոջ սուրբ Աստուածածնայ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զ. յարուցմունս թշնամեացն տեսեալ Քրիստոնէից, որք ապաստաքոյ քան զեկեղեցին պահապանքն էին, մտեալ ի ներքս հապճեպ պատմեն վարդապետին, և խընդրեն ի նմանէ տալ ինքեանց հրաման փախչելոյ ի վերայ սառին՝ ի ներհակ կուսէ եկուզակացն դիմելոց։ Իսկ նորա առեալ ջերմեռանդ հաւատով զսուրբ Խաչն հրամայեաց ի ձեռին իւրում, որ ասի Կոթայ-սուրբ-Նշան, զորմէ այլուր լիցի մեզ պատմել, և պատուիրեալ ժողովելոցն հանդարտիլ և հաւատով դարձուցանել զերեսս իւրաքանչիւրոցն յարևելս հանդէպ արքոյ Պարսպարագին հայցելով զօգնութիւն յերկնից, և շտապաւ զամենայն հազորդեաց մարմնոյ և արեան Ցեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և պատրաստեալ զամենեսեան ի մահ, յուսացուցանելով հրաշափառ փրկութեան իւրեանց։

Յայսմ միջոցի և թշնամեացն հընչեցուցեալ զփողս և զքնարս յարշաւանս պատերազմաց, թևակոխեալ զծովացեալ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սատոյցն ժամանեն ի միջակէտ ծովոյն. ուրանօր եղեն երկրորդ հանդէս Մովսիսի և Փարաւոնի. քանզի անմեղ երեխայից հառաչանք և աղաղակքն դիպացեալ եղին յերկինս և առ քարշեալ զզօրութիւն հզօր ձեռին և բարձր բազկի ամենակալող Աստուծոյն, զի մի՝ բարբանջեսցեն թշնամիքն թէ՝ «Ո՞ւր է Աստուած նոցա»։

Վասնորոյ առ ժամայն, որպէս զԹնդանօթս պատերազմաց՝ ահագնակոչ ճայթմամբ պատառեալ սառինն շրջապատաւ կղզւոյն, որպէս զՅորդան և զԴադան, բանակաւ իւրեանց՝ զետ կապար իջին ի ջուրս սաստիկս, և այս ոչ ի ձեռն գաւազանի նախամարգարէին Մովսիսի, այլ շնորհօք հրաշագործ սուրբ Խաչին Քրիստոսի և պատուական Մարմնոյ և Արեան իւրոյ։ Որոց՝ այսպիսի ամենակալող ձեռին զօրութեամբ զերծեալք ի մեծ վտանգէ գերութեան և մահու, գնացեալ իւրաքանչիւրոց Դեղարքունցւոց և այլոց ի տեղիս իւրեանց, զովելով և փառաւորելով զհրաշա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:21 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գործողն ամենայնի զԱստուած, որ միշտ գիտէ՝ յանակնկալ պահու, ուր հատեալ է յոյս փրկութեան, հրաշագործել, և զանկարն ի մէջ՝ գործել ինքնին։

Յաւուրսն յայնոսիկ, և զԼազար Կաթողիկոս հրամանաւ նախարարին Երևանու բերեն ասա ի Սէվան յարգելանս (1748 ՌՃՂԸ), և ի տեղի նորին զԲիւրթիւր Պետրոս Եպիսկոպոսն օծանեն Կաթողիկոս։

Եւ Յովհաննէս Վարդապետ վերատեսուչն վանիցս, բարեպէս քաղաքավարեալ զկեանս իւր, ելանէ յասասեացս վերակոչմամբ Տեառն։

Փոխանորդէ զտեղի սորին՝ Պոնդակաւ Մինաս Կաթողիկոսին՝ Սամուէլ վարդապետ, ըստ Հայոց թուին ՌՄՊ (1753), Մարտի Ի։ Եւ նոյն Կաթողիկոսն Մինաս նոյն թուոյ յետ երկուց ամսոց։ Մայիսի 12 վախճանի, և դնի ի տեղի նորին Աղէքսանդր Եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Իսկ Սամուէլ յետ ժամանակաց հրաժարեալ յԱռաջնորդութենէն Սեվանու, յաջորդէ զտեղի նորին՝ Պոնդակաւ Սիմէօն Կաթողիկոսի՝ Յովհաննէս վարդապետ մի ցոփաբարոյ և արբշիռ, անփոյթ ի շինութեանց և ի բարեկարգութեանց։

Յաւուրս սորա կամեցեալ է Սիմէօն Կաթողիկոսն գալ յուխտ յԸնտպատն Սեվանու։ Յովհաննէս տեսեալ թէ՝ հընագոյն մատեանք՝ անխնամ պահպանութեամբ՝ աղճատեալք և անպիտանացեալք են, յաղագս ոչ ունելոյ զգրքատուն մի, (որպէս և ոչ մինչև ցայժմ արարեալ են զայնպիսի հոգացողութիւն գրատան 1)— Յովհաննէս վարդապետ երկնչելով ի գլխաւորէ Սիմէօն Կաթողիկոսէ, վասն անխնամ պահպանութեան իւրոյ զայնս, ժողովեալ զամենայն անկազմ եղեալ զհնագոյն մատեանսն, զտետրակսն և զյիշատակարանսն՝ գիշերային արկանէ ի ծով,

(1) Այժմ ունի զգրքատուն, թէև ներքնայարկ, և զկարգաւորս ցուցակ գրանց։ Ծ. Նշ. վրդ. Ջալ՝

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ եկեալ Պաթողիկոսն զոչինչ գտանէ ի հնութեանց։ Թերևս այսպիսի անհասունակութիւնք իցեն պատճառք, որ ոչ զբտանին աստ անցելոց ծանօթութիւնք։ Ուր ակնունէաք և մեք գտանել զ ցանկալի մատեանս նախնեաց, նկատելով զհնութիւն տեղւոյն, և զհոյակապ չնաշխարհիկ զընտրելագոյն զաստուածային արան, որք ի սոյն անապատէ սերեալք, բայց անբարեհոգիութիւն ոմանց, զյուսալի լուսատուտունն, յայտնապէս խաւարչտին թողեալ, որ մեզ ի ներկայ սրբակրօն և ուսումնասէր Յովհաննէս Ուռաջնորդէս յորդոր և խնդիր եղև զանցելոց զկարևորսն մարմնացուցանել աստ ի քարտիզի, զի մի՛ իսպառ անյիշատակ մնասցէ հռչակեալ անապատս այս. վասնորոյ և մեք զեղբայրական զբարեսէր խնդիր նորին ոչ կարացաք ապարդիւն թողուլ, ըստ կարևաց մերոց յայլ և յայլ պատմութեանց մուրացիկ եղեալ զայսքանիս մարմնացուցաք աստ. ի վայելս ապագայ բանասէր հարց և եղբարց։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երդ ժամ է և զայլ յաջորդսն նոյն Առաջնորդի շարադասել։ Մթանաս վարդապետ Մակուեցի յԱրտազ գաւառէ՝ փոխանորդէ զտեղին ութն ամ։ Եպս Եզրիա Եպիսկոպոս Գանձասարայ, և յետ նորա Եղիազար ոմն Եպիսկոպոս Գանձասարայ. և յԱռաջնորդութեան սոյն Եղիազարայ՝ Սարգիս վարդապետ միաբան Ղէնետկու (սուրբ Ղազարու վանից), յետ բազում անձկութեանց և տառապանաց ի յԵրիածնէ կալանաւորութեամբ գայ ատ ի Սէվան, կացեալ թարց մնրդասիրութեան իբր ամս երկու, և վերադարձեալ յԵրիածին, անտի փախստեայ անկանի ի կողմն Խոյոյու, և զերծանի ի տառապանաց։

Դնի այսոցիկ Գրիգոր վարդապետ Գանձակեցի, այր անարատ և աշխատասէր. յետ ութն տարի զանապատն ի բաբերդութեան ուսանելոյն՝ անկանի քան ի մի ճանապարհորդակից Հայկազնեաց ելի ի ձեռս Լեկեաց, առաջի վանուցն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ի մէջ Յամաքաբերդի և Գոմաձորու. ընկերքն տարեալ վաճառի ի տէրութեան Ռուսաց ի Գ. զլար քաղաք, ինքն ազատեալ տեղւոյն մերալնեօք, և վասն ընկերացն՝ ինքն Գրիգոր վարդապետ երաշխաւոր եղեալ ազատեցուցանէ և զնրսա. Ապա գայ, ի Գ. ուկաս Կաթողիկոսէ Կոնդակ առեալ գնայ դարձեալ ի կողմն Ժտարխանու և Գ. զլարու, առ ի վճարել զպարտս երաշխաւորութեան գերեացն, և վաղճանի ի նոյն Գ. զլար քաղաքի. որոյ միջոցք գերութեան, վերադարձի և վախճանի անցեալք են չորս տարիք, և բոլոր Առաջնորդութեան աւուրք սորա եղեալ է երկոտասան ամ, որ հասանի ի թուական Փրկչին 1805 և Հայոց ՌՄԾԴ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ Զ.

Դէպք՝ աճ և ծնունդ Սարգիս Վարդապետի։

Որովհետև գնալ գալ երանելի Գրիգոր Վարդապետին ի ժամանակ անիշխանութեան եթող զանապատն, և յաւուրսն յայնոսիկ, Էջմիածնի Կաթողիկոսութիւնն ևս էր յերերման և ի տատանման, ի պատճառս Դանիէլի և Դաւթի յանցուածոցն, զորս բաբեպէս գիտել կամեցող եղբայրն կարէ ընթեռնուլ՝ ևս յինէն զբրեցեալ պատմութիւն և կշիռն, զոր ընդ այլ գրեանց իմոց թողեալ եմ աստ ի Սէվան։

Եւ զկնի դադարելոյ այնպիսի մրրկաց, իրրև ի գերութենէ վերադարձեալ բազմաչարչար Դանիէլ Կաթողիկոսն ի Աբարայրաղայու ի Էջմիածին, նշանակեալ թուոյ Հոկտ. 12 (1807), ժողովարարութեան Կոնդակ՝ ի զանազան կողմունս և ի նահանգս Տփխիսու շնորհէ Սարգիս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վարդապետին Սէվանու. որ և նա այնպի-
սի. Կոնդակի զօրութեամբն, բարեպաշտ
մերազնէից տրօք և ողորմութեամբն պահ-
պանէ զանապատն և զմիաբանութիւն սո-
րա։ Քանզի շրջապատ անապատիս, ի բրո-
նութենէ երուզակաց և Պարսկային յիշ-
խանութեանց, ի Հայկազանց դատարկա-
ցեալ Պարսկաբնակ եղեալ էր, վասնորոյ
անապատն թարց թէմի և վիճակի կայր
յայնժամ, որով կարօտացեալ էր ամ
ըստ ամէ վերատեսուչն սորա ի զանազան
նահանգաց ժողով առնել և պահպանել
զյօժարական մենացեալսն յաշխարհէ։

Ասնաւանդ՝ մեծապէս օժանդակ կա-
ցութեան սոցա էր Տփխիս քաղաքն, ուր
ունէր և զքանի մի կրպակ կամ խանու-
թըս յիշատակ ի տեղւոյն մերազանց շը-
նորհեցեալ, որոց տարեկան վարձքն էին և
են՝ սոյն միաբանութեան գինք զգենլեաց,
նսև ի կողմն Ղազախու գտանեցեալ ազ-
գային բարեպաշտ ժողովուրդք մեր՝ ամե-
նայն տարի անխնայայաբար օգնեալ են

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սոցա հացեղինոք, իւղոք և պանրոք՝ ըստ այսմ օրինակի և յայլ ուրեք հասեալ են ժողովարարք սոցա, օրհնեալ աղգ մեր երբեք ոչ են խնայեալք ի սոցանէ զկարեւոր օժանդակութիւն իւրեանց. քանզի իրաւամբ ճանաչեալ են զայս միաբանութիւն՝ կատարեալ աղքատաք սիրոյն Քրիստոսի, և հաղորդակից քն կաքեաց և պիտոյից սոցին՝ վերապատուեալ են զստաս իսկապէս Գանձապետս երանելեաց դասուն, և Աստուծով են իսկ. քանզի ճշմարտապէս թողեալ է սոցա զհայր, զմայր, և զայլսն ըստ բանի առաքելոյն Պետրոսի, միմիայն 'ակն ունին անտուտ խոստմանն Քրիստոսի մերոյ, ուրեմն և բաժակաւ միով ջուր ցուրտ մատուցողքն սոցա՝ ոչ լինին առանց վարձուց, զի սոքա են կատարեալ աշակերտք երկնաւոր վարդապետին։

Յաւուրս վանահայրութեան յիշեալ Սարգիս վարդապետի սրբութեամբ, հեզութեամբ և իմաստութեամբ փայլէին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քանի քանի արք Աստուածային, որոց
ակնառուքն էին Ռափայէլ, Մխիթար և
Մակար վարդապետք։

Դասայիշատակեալ Ռափայէլ վարդա-
պետն ընդ ազգային թուականի ՌՄԾ-
Նոյեմ. Ի, ծնեալ ի Գանձակ, զ'ինի զար-
գացման հասակին գնայեալ ի մեծ Ընա-
պատն Տաթևու, ապա անդ չարով առա-
ել կատարելութեան ժամանել, եկեալ
ի Սեվան ի ՌՄԽԴ, որ ի նմին ամի ձեռ-
նադրեալ է Աբեղայ, անցուցանելով ըզ-
կեանս ճշմարիտ և անկեղծ կրօնաւորու-
թեամբ, որով եղեալ է խոստովանահայր,
միանդամայն և վարժապետ կրօնաւորացն
ժամանակին, որոյ բարեկարգութեանն շա-
ռաւիղք տևեն մինչև ցայժմ ատ ի սուրբ
Ընապատիս։ Ա կայն ներկայ միաբանք մի-
ասերան, թէ՝ զամենայն աւուրս կենաց
իւրոյ՝ հացիւ և ջրով շառանայր, և ո՛չ
զվայրկեան մի անցուցանէր թալցապօթից
և ծերապրութեան, այլ թէ՝ սահմանեալ
էր անձին իւրոյ՝ աւուրն զհաղար Ծունր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կրկնել։ Երանելիս այս փոխեալ է զմիձակ կենացն առ Տէր ՈՍԿԻՕ, Հոկտ. Ի, պանդխտեալ աստեօք յիսուն և վեց ամ, թաղեցեալ յիւրակիրթ միաբանութեանցըն Սէվանու ի հիւսիսակողմն սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն, որոյ աստուածահաճոյ վարուց հոչակն քարոզի ցարդ ի գաւառս Հայաստանեաց։

Ա՛չ պակաս քան զԱրդապետ իւր, յիշատակաց արժանաւոր Մխիթար, գրասէր, բանաձանօթ վարդապետն ապաշխարութեան, տեղեաւ Շամքորեցի. որոյ տեսեալ զանապատս դատարկացեալ ի սուրբ գրեանց մխիթարութեանց, հեատխոյզ եղեալ՝ ասի և անտի ժողովեալ զարժանաւոր մատեանս նախնեաց սրբոց հարց, որպէս և զԱդինասարաս անուանեալ Սաղմոսացն մեկնութիւն Լամբրոնացւոյն, սոյն Մխիթար վարդապետի հետևողութեամբ ի ձեռս բերեալ և դիւրընթերց գեղեցիկ գրովք գրեալ է երանելեաց գաւառին պատգամատար Աղաւնի Վանեցի

Աստուածատուր պատանին, որպէս և ինքքն վկայէ ի վերջաբանութեանն նոյն մատենին այսպէս։ ,, Եւ զի մինչ նոյն ինքքն Մխիթար սուրբ Հայրն մեր տակաւին կենդանին էր՝ պատուիրեաց նուաստութեան մերում, որպէս զի աշխատասիրեալ միով գրչաւ աւարտ ղբովանդակս ածցուք մատեան ,,։ Եհա՛ յայտնի վկայարանութիւն դրասիրութեան Մխիթար վարդապետիս, և մանաւանդ ի տումարագրելն մեր գիշատակին Անապատիս, ըստ ներկայ գտանեցեալն ունիմք յատուկ յանուանէ նշանակել, թէ՝ որոշ հետևութեամբ՝ աշխատանօք կամ գոյիւք ժողովեալք՝ կան ի վայելս ներկայ հարց և եղբարց։

Արքատէր Հայրս Մխիթար, զկնի միոյ տարւոյ վախճանի դատիուրակ վարպետին իւրոյ Յովսէփի՝ վախճանի ի ՌՄԿԸ (1818) Մարտ ԻԸ, ըստ բանի նախայիշատակեալ Աստուածատուր Վենետիկեցւոյն. վասն զի ո՛չ յետ բազում ինչ աւուրց՝

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ախտացեալ նմա զախտ ցուաղին, ապա-
տամբ ամենևին ի բժշկական դեղոց, և
անհնարին ի մարդկայնոյ լինել յօգնա-
կանութենէ, այնուհետև լքեալ զկենցա-
ղըս, առ անձկալին իւր փոխեալ լինէր. ի
Պրիստոս, որում բաղձացեալն էր ի ման-
կութենէ, թողլով կախոդին զմեզ զիւրն
զկնիս։

Հանգոյն սոցին, սրբասնունդ, աշխարհ-
հատեաց, անընչասէր, սաղմոսերգու և ա-
ղօթիկեր Մակար վարդապետ Համշատի-
նեցին, որ եղեալն ինչ իւրումն ժամանակի
իբր զարդ սոյն Անապատիս, պատահական
գառն մահուամբ պակասեալ յընկերակ-
ցացն իւրոց։ Պանդի ի մէկն Մարտի
(ՌՍՀԳ, 1825) որ էր կիւրակէ Տնտեսի,
ինքն մատուցեալ զքաւչարար պատարա-
գըն, և յերկուշաբաթի կամեցեալ գնալ
յայդերութիւն Պօղոս վարդապետ ընկե-
րակցին իւրոյ ի Յամանքաբերդ, ի վերայ
թուլացեալ սառինն, մինչ մերձեալ է յե-
զերն՝ ելանել ի ցամաք, բեկեալ սառինն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առեալ ընդ իւրև հնգձուցանէ զողորմելին, անյայտ առնելով և զմարմինն, որով եղեալ է անմխիթար սուգ միաբանակից եղբարցն։ Այլ զկնի երկուց եօթներեկաց, յերրորդի կամ ի տեսլեան երիցս երևեալ իւրն յատուկ սիրելի Յովհաննէս վարդապետի Նարդեանս առաջնորդի, իբր մեղադիրս լինելով նմա, թէ՝ ընդէ՞ր ո՛չ բերեալ թաղէք զիս ընդ հայրն իմոց, զի ահա՛ ես կամ առ եկեղեցեաւ, ասացեալ է։ Այլ թէ՝ առ ո՞ր եկեղեցեաւ, զայնմանէ լուեալ։ Ընկերակից ՝ն կարծելով՝ շուրջ զկղզեաւն, կամ Հանդէպ նորին, եկեալ որոնեն ի բաղում տեղիս. և յո՛չ գտանելն՝ սգաղդեաց լուեալ, յանձելով այցելութեան Տեառն։ Եւ յանցանել ութն ամ սեայ ժամանակի, իբր հրաշիւք գայ Պարսիկ մի և ասէ ցկրօնաւորսն, թէ՝ ընկերաձիցին ձեր մարմինն արասքոյ կղզւոյն Հանդէպ եկեղեցւոյ Պանձավանից, որ ի Ընկիլինի մերձ ի գիւղն Պօրտակ՝ կայ։ Եւ սոցա պարդևասրնալ զՊարսիկ աւետա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տուն, գնացեալ ընդ նմա, գտանեն զոմանս յօդուածոցն, և զհանդերձսն ո՛չ իսպառ փոխեցեալս. ժողովեալ զմնացեալ մասունսն, Սաղմոսիւք և պաշտամամբ բերեալ թաղեն մերձ ի գերեզման Պապայէլ վարդապետի իւրոյ, 1825 և ի 22 Հոկտեմբերի ամսոյ։

Եւ արդ՝ լուեալ զերախտօք և զցանկալի կենօք երանելի Աստուածատուր պատանւոյ՝ ո՛չ էր մեզ արժան, մինչ իրականապէս տեսաք զգովանի վաստակս շնորհածոր մատանց նորա, զմատեանն Ադինասարաս կոչեցեալ, բոլոր մեկնութիւնն Սաղմոսացն Դաւթի, ի Ներսիսէ Լամբրօնացւոյն յօրինեալ, և ի սոյն Աստուածատրէ դիւրընթերց գեղեցկատառ օրինակեալ, հանդերձ քաղցրաձայն շարադրութեամբ աւարտաբանեալ։ Լասնորոյ հարկեցաք և զսրմանէ համառօտ ծանուցմամբ անցանել։

Աստուածատուրս այս՝ էր յԵրևան քաղաքի առն երևելւոյ Պետրոսի կոչեցեալ Յովհաննէսի որդի, որոյ եղբայրն Պետրոս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ալեքսան ի Ներկայիս է, մի յիշխանաց և յիրևելեաց Երևանու։ Պատանիս այս ի մանկութեան զարգացեալ և դաստիարակեալ, ո՛չ այնքան վարժապետաց, քան թէ յատուկ շնորհաց հոգւոյն սրբոյ, սրբակեաց վարուք, և երկնաձիր իմաստութեամբ, իւրով յատուկ ջերմեռանդութեամբ հրաժարեալ յամենայն հայրենի փառաց և ի վայելչութեանց, մինչ ի տան հօր իւրոյ էր, վարէր ընդ նոսա որպէս օտարի՝ անմատն խնդութեանց և վայելչութեանց նոցին։ Երբեմն գայ ի տուր Ենոպատաս թէև նորին յաշխարհէ, բայց՝ որպէս վկայեն միաբանք ուխտիս, գրէթէ՝ նոր հեզինակ իմն աստուածատուր կըրթեալ եկեալ է առ սոսա, որ ամենեքին կրօնական հարք հատաչմամբ դրուատեն գերանելիս զայս, որպէս և արգասիք պըտուղք հոգւոյն և մատանցն ի Աղենասարան տեսանի, ուր ասէ այսպէս։

«Լանորոյ և մեր ի շնորհս Տեառն յուսալով, փոյթ յանձին կալեալ ձեռն-

արկաք ի սորին գրութիւն։ Եւ սկսեալ ի ՈՍԿԻ մերոյս թուականէ, մինչ ցարդ, յորս է թուականն մեր ՈՍԿԻ, սակաւ առ սակաւ գրեցմամբ, ահաւասիկ Տեառն շնորհիւ և մաքուր ձերդ մաղթանօք, յաւարտ հասուցաք զմատեանս միանգամայն։։

Երդ ապա երանելի Հնաշխարհիկս իրրև աւարտէ զսկսեալ մատեանն Աղինասարայ, յորժամ և նախայիշեալ սրբազան Հայրք Ռափայէլ և Մխիթար վախճանեալք էին՝ գնայ ի Սեվանու ի Լիմ և ի Պուռուց անապատսն, ուր անցուցանէ զերկու ամ ի կենաց իւրոց, և անտի գնայ Հեռիոս ի սուրբ Նրուսաղէմ ի անօրինեալն ուղեան Գրիգորոսի Սատուծոյ մերոյ՝ ուրուանօր անծանօթ յամենեցունց, քանի ամ զանապան լինի՝ յորժամ երթեալ ուխտաւորաց ծանուցանի ոմանց՝ թագուցեալ զանձն ի Ամիրան կղզի, թերևս եկեսցէ և ի Սեվան. բայց կարծեալ Գրարջին զաշխատանս երանելի կա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մաւոր աղքատացեալ Աստուածատրիս, ամփոփի անդ ի Միպրոս ի հոգետուն Հայոց, որում ժառանգակիցս արասցէ իւրաքանչիւրց կշռադատողն աշխատանաց և զիմն ապիկար ճառատողս։

Դիկեալ են թէպէտ ի սոյն անապատ և երկու եւրեալի դպիրք Դարսեղ և Մովսէս անուամբք ուսումնասէրք, յետոյ Ակնեալք աստի կան արդ ի կողմն Պարաբաղու, կրթեալք զանազան լեզուագիտութեամբ թերևս և վարուք։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Աստնորդութիւն Յովհաննէս վարդապետի

Արգիս վարդապետն Յոսկանապատ գեղջէ ի գաւառէն Դանձակայ կոնդակաւ Դանիէլ Կաթուղիկոսի տասն և մէկ տարի վէքիլութեամբ կամ առաջնորդութեամբ կառավարելոյն զկնի զանապատն Էվանու, ինքնին կամաւորութեամբ հրաժարեալ յայնմ կոչմանէ, և համահաճութեամբ այլ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

միաբան հարց և եղբարց հանդերձ մահ-
տեսօք ընտրեալք յինքեանց՝ զքաղցրա-
բարոյ, համեստակենցաղ ի նահանդէն
Ղազախու ի Հուչաջուր գեղջէ զՅովհան-
նէս վարդապետ Տէր Արտիրոսեան, որ է
քեռորդի Սիմէօն վարդապետ առաջնոր-
դին Ղազախու, դաստիարակեալ ի ձեռն
Նարդիս փայլեալ, Ղարաբաղցի Խաչան
գաւառէ Յովսէփ վարդապետ Տէր Աւետի-
քեանի, որ զկնի տասն և եօթն ամաց հա-
սակի եկեալ յանապատս Աէվանու, յա-
ւուրս Ոսափայէլ և Մխիթար և Մակար
վարդապետաց և Աստուածատուր Գե-
ղեան Դպրի, յորոց ուսեալ զվարս և զա-
նապատական դպրութիւնս, եղեալ և ինքն
Յովհաննէս վարդապետ համեստ կացու-
թեամբ առաքինասէր կրթականութեամ-
բըն ցանկալի և գովելի յամենեցունց։

Ղասնորոյ միակամ հաճութեամբ ընտ-
րեալ, և խնդրանաց մահզէրս գրեալ էին
առ Սրբազան Կաթուղիկոսն Եփրեմ, և
առ Սրբազան Սինոդն Սուրբ Էջմիածնի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ և սոյն պատմաբանս (ինքն) ամ մի յառաջ ի կողմանցն Պ.ըիմու գալով ի Սուրբ Էջմիածին կացուցեալ էին և ըզ-նուաստութիւն իմ անդամ նոյն Սինոդի 1828 ՈՒՄԷՆ։

Մեք կաթողնեալ գոլով Հայաստա-նեայցն վանօրէից, մանաւանդ Եկեղեցու այս սուրբ ուխտի և տեսութեանն, խընդ-րեալ էաք հրաման ի Պ.ետերէ և ի Սինոդական Հայոց շրջել ի վանօրայսն ըստ բաղձանաց իմոց, որ եղեն իսկ։

Պ.ատնորոյ յատկապէս զրնցաւ դարձ խնդրագրոյ Էնեպատաւորացս վասն ա-ռաջնորդութեան յիշեալ Յովհաննէս փարդապետի, թէ՝ ահա Էնդամնակիցն Սի-նոդին մերոյ Մանուէլ վարդապետն գա-լով յուխտ ի վանս ձեր, առ որ յանձնե-ցաւ բարուք վերահասու լինիլ բոլոր պարա-գայից և կատարութեան տեղւոյդ և ձեր, ապա ի վերադարձման նորին զարժանա-ւորն ունիմք տնօրինել, ի յօգուտ և ի բա-րեկարգութիւն ձերդ Մխիթարեանութեան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ընկեալ մեր ի յիշեալ թուոյ օգոստ. 12 աւուրն, զվերափոխման Տ՝օր Տեառն զՀանդէսն, ընդ անապատաւոր սրբոց Հարց ի միասին կատարեալ և զփրկագործ պատարագն յայնժամ անարժանութիւն մեր մատուցեալ, վերադարձեալ ծանօթութեամբ և խնդրագրովք ամենեցուն ըստ առաջին հաճութեան իւրեանց։

Այց ներկայութեամբ մերով ասա՝ տեսաք և ծանէաք, թէ՝ վասն աղքատութեան, և կամ՝ առաւել ճգնասիրութեան իւրեանց, վաղեմի սովորութիւն ճեացեալ է առ միաբանութիւնն Սէվանու, զամենայն մշակական ծանք ծառայութիւնս վանուց իւրեանց՝ ինքնին անխտիր Առաջնորդք, Վարդապետք, Աբեղայք, Աղերք և Տահտեսիք առնեն և կատարեն, ընդ հոգևորական պաշտօնից իւրեանց. որք են հացագործութիւն, խահարարութիւն, կովուց կթելն, հանդերձ այլ պարագայիւք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մանաւանդ և անտանելին քան զամենայն, ծանրագոյն անկերպ և անտաշ նաւուցն իւրեանց՝ նաւապետն ևս այս հոգևորական միաբանութիւնն էր յամառ և ի ձմեռն, ուստի բազումք վնասակալ և ցաւագարեալ՝ են և շրջին որպէս զկիսակենդանիս։ Այս նաւարարութեան պաշտօն սոցա և ինձ անտանելի երևեալ, կամ եղև գիտել զյօժարութիւն իւրեանց. տեսի որ վասն անձեռահասութեան և աղքատութեան զնոյն անցս տառապանաց իբր յօժարութեամբ կրեն։ Ամին իրի իսկ և իսկ չորս արս քաջս և աշխարհիկս վարձեալ, զեւրոպացիսն վեց թուման Երևանու դրամով, և մէկ ձեռք շորով, եղի ասա նաւապետ լինիլ սոցա, և զայլ մշակական ծառայութեանցն բարձողք. յայտ է թէ՝ մանաւոր դիւրութիւնս ընկալան եղբարքն։

Ապա ժողովեալ զգրուածն Պաթուղիկոսացն առաջնոց և ոչ գտի զհաստատուն Պոնդակ մի, յանուն ումեք առաջ-

նորդութեան, կամ թեմից և վիճակաց յատկացեալ անուամբք նշանակեալ։ Այլ կամ պատուէր և հրատ վասն պատահեալ դիպուածոյ իրիք. և կամ ժողովարարութեան պատգամք էին պատրաստի գտանեցեալքն։ Զազիւ ի բոլոր գրուածոցն հատ ու կտիր քանի մի գիւղօրէից զանուանս գտի գրեալս, որ կանուխ ժամանակաւ վիճակ Սէվանու Ընապատին յորջորջեալք են, յորս յոյժ սակաւք են մերազն բնակիչք, և կամ բնաւ ո՛չ։

Բայց նուաստութիւն իմ խորհրդով Զարցն Սէվանու զբաւական գիւղօրէից զանուանսն գրեալ՝ ընդ իս տարի ի Ընթոռն, թէ և՝ ընկերք իմ վասն վիճման վիճակին յերկարեցին յօգոստ. ամսոյն մինչ ի հոկտ. Զ. բայց վախճանն ի վերայ այնց վիճակաց հաստատեցաւ առաջնորդութիւն Յովհաննէս վարդապետին, որպէս և Պոնդակի բանքն առ այս վկայք են, ուր գրի այսպէս ,, Օ՛ի հասու եղաք բարուք վասն ամենայն ներկայ որպիսութեան

և հանգամանաց Ընապատիդ և վիճակի միաբանութեան ձեր, ի ձեռն բարձր—Երժանապատիւ Տանուէլ վարդապետի հարազատ որդւոյ մերոյ և սրբոյ Աթոռոյս, զոր առաքեալ էաք մեք և կառավարութիւն Աթոռոյս այդր ի վերահասութիւն։ Եւ ահա զոր միանգամ արժան և օգուտ Ընապատիդ դատեցաք, գրեմք ձեզ յատկաբար այսու Կոնդակաւ ,,։ Բայց տակաւին սոյն առաջին Կոնդակաւ ո՛չ էին կամք նոյն Հարց հաստատել զթեմ և զվիճակն Եկվանու, որպէս ի հոկտ. 2. գրեալ Կոնդակն ո՛չ ցուցանէ զանուն գեղջ միոյ, վասնորոյ հարկ եղև ինձ այլ եղանակաւ հետևիլ, և զերկրորդ Կոնդակ առնուլ ի վերայ թեմից և վիճակաց սորա, որպէս նոյն հոկտ. 26. գրեալ Կոնդակն ցուցանէ յատուկ յանուանէ զգիւղօրայս և զվիճակս սորին։

Երդարև սոյն առաջնորդ ըստ համեստ և աստուածասէր բարուց իւրոց, եղև իսկապէս բաղդաւոր, զի ըստ այլ առաջ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նորդաց ոչ եղև կարօտ յօտար և ի հեռաւոր վիճակաց որպէս զմուրացիկ հայթայթել զպարէնս միաբանիցն իւրոց։ Այլ աղօթիւք իւր և իւրոցն միաբանից, ողորմութեամբ Աստուծոյ և սուրբ Պատերն, հեղան զեղան ազգք մեր ի զանազան կողմանց և ի գաւառաց օտար Տերութեանց, ընդ գայիսանիս սուրբ Պատերութեանն, յորոց և վիճակեալ գիւղօրայքն Սէվանու եղեն բազմամարդ մերազն բնակչօք, և ամենեքեան ջերմեռանդ յօժարութեամբ արդիւնատուք են սրբոյ Ընապատիս և կարօտք սրբանունդ աղօթից այսմ միաբանութեան. որ ի ներկայիս են հեռաւեալքս, որ ցուցանեն անուամբք, պաշտօնէիւք և հայրենեօք։

Ներուանի Մկրտիչ և Պօղոս վարդապետք, ի գաւառէն Կոտէից, այժմ Ղրբբուլաղ կոչեցելոյ, ի Արձաբի գեղջէն ի մանկութեանցն կրթեալք յանապատիս աշխատաւոր անձինք, հաւատարիմ Միաբանք և գործունեայք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պարապետ վարդապետ Պայազետցի, այր համեստ պարկեշտաբարոյ, և խոստովանահայր միաբանութեանն, հարազատ բանակատար վանուցս։

Պարտիրոս վարդապետ Աղարշապատցի, այր հանճարեղ և արիաջան ի խօսս և ի վաստակս։

Յարութիւն վարդապետ ի Պոտէից Երծնու գեղջէն, նախ քահանայ և յետ վախճանի ըծակցին, ունեցելովքն եկեալ յանապատս վարել զկրօնաւորական կեանսըս։

Յոհան աբեղայ Պղնախեցի մտերիմ հարազատ և աշխատաւոր տանս Աստուծոյ, բայց անբաղդ, որ ձեռնադրեալ ընդ այլ ընկերացն յանցեալ թիւ հոկ" 17. չ'և լրացուցեալ զքառասունսն, վերադարձեալ ի կաճառս անմարմնոց, ուր փոխան Քրիստոսեան պատարագին, զանձն իւր պատարագեալ է։

Աւրդան աբեղայ Աշաշկերտցի, աղաւնաբարոյ, հլու և հպատակ նախագահից,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

արի, աղօթասէր, թերևս և ընթերցասէր, քանզի միշտ զգիրսն ի ներքոյ անթի իւրոյ կրէ, այր գործունեայ ի մանմնաւոր աշխատութիւնս։

Ովիկողայոս աբեղայ Պաստարացի, քաղցրատեսիլ բարեհամբոյր, ճգնասէր, լուսարար սրբոյ ուխտիս, ի մարդկային կազդուրանաց տկարագոյն, բայց հոգւոյ եռանդիւն արի, զգաստ և սրբասէր, է ևս կազմարար մատենից սրբոյ տանս։

Ընտօն աբեղայ Թիֆլիզեցի, աչալուրջ խորախորհուրդ, արագագիր, ընթերցասէր, որ խոստացեալ է՝ զայս պատմութիւն միւսանգամ իւր գեղեցիկ գծիւքն ծրել, առ ի դիւրընթերց լինել բանասիրաց, և ածանցեալ ի մէջ միաբանութեանց, զի անցնիւրքն ծանօթասցին վանուց իւրեանց առաջին, միջինքն վերջին անցուածոց և բարեկարգողաց ՝արց և երախտաւորաց, ընդ նոսին և սրբասէր նախնեաց ի Քրիստոս հարանացեալ ընկերակցաց։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յարութիւն Սարկաւագ Թիֆլիզեցի, այր համեստ, աղօթասէր, ընթերցող, ծանօթ քերականութեան, ճարտասանութեան և թուաբանութեան, ժամասաց, անդադար սաղմոսերգու. բայց ցաւագնեալ մարմնական կազմուածովքն, ջանացող դաս ասել եռանդնոտ ընկերակցաց։

Յակոբ Սարկաւագ Երևանցի, սրբասէր, արիաջան, աշխատաւոր, խահարար հասարակաց ի սէր եղբայրութեան։

Միքայէլ և Յովսէփ ուրարակիրք Թիֆլիսեցիք, պարզամիտք, աշխատասէրք, բարձողք եղբարցն ծանրութեանց, թեթևս մնացեալ մշակական պաշտօնից, զորս խափանեսցէ Տէր, առ ի լինել և սոցա իսկապէս հոգևորականք։

Պարապետ Երևանցի, ի կարգս Մահտեսեաց, ի մանկութենէն կարօտ զգալի լուսոյ որակացն ծանօթութեանց, իմանալի լուսով զարդարեալ, բազում առաքինական մասամբք (քան զիս զականա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւոր կուրացեալս) գերազանցեալ, զսաղմոսն բոլոր և զժամերգութիւնն, Շարականօք, անգիր իբր անսխալ բերան մշտամռունջ երգու առ Աստուած, և անտրտունջ վիճակի իւրում քաղցրաբան ի խօսս կցութիւնս և եղբայրաշահ ի խրատս։

Մահտեսի Գաբրիել և Գրիգոր Գաբաբաղցիք, արք երևելիք ի վաճառականութեան, և այժմ իրաւամբ գովելիք, ի մենակեաց ճգնութեան և յաղօթս, հեզահոգիք, լայնախորհուրդք, արի հսկողք, առաջինն հաւատարիմ պահապան ամենայն պիտոյից քսրատան, և երկրորդն՝ իսկապէս ի սուրբ Աղարեկացւոյն գովեցեալ, կոչնակահար, և ժամակոչ, արի և արթուն, ըստ անուան իւրոյ կատարեալ հսկող, պատկառելի յամենեցունց և ոտկաւ տիպար առ ամենեսեան։

Մելքոն Թիֆլիզեցի, բազմարուեստ, արի և անձանձիր աշխատաւոր ի շինուածքս վանուց, հիւանութեան, որմնադրու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեան, մոմակազմութեան և յարակայ պարարիզպանութեան և խաւար տեղինաց անպակաս աշխատաւորութեամբ բաւականացուցանող ամենեցուն, յետ այսպիսի անդադար աշխատանացն՝ յեօթնեակ կարգս ժամերգութեանց անպակաս աղօթաւոր, քաղցրաձայն դպիր և անթերի սաղմոսերգու, առ որ ասել զարդ Ընապատի ոչ է սխալելի և իմ հոգւոյս փարելի։

Ստեփան, Սարգիս և Պետրոս Ս. բաստանցիք, արք բարեմոնք, հոգեսէրք, վաստակաւորք վանուցս աշխատութեամբ իւրեանց, նոյնպէս և Մակար Պայազետցի այր աղաւնաբարոյ և աշխատաւոր. արդարև ամենեքեան սոքա քան և երկու հոգևորականք ըստ օրինակի ադենական դրախտի իւրաքանչիւր իրր տունկ անմահութեան զանազան գունովք պտղովք, ճաշակաւ և հոտիւք՝ առաքինութեանց վայելչացուցեալ են զանապատն Եկեղեաց, Ընտուծով ևս քան զևս վայելչա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցուսցեն, շնորհիւ կայսերն Ռուսաց և թագաւորին մերոյ Նիկոլայ Պաւլովիչի առաջնոյ։

ԳԼՈՒԽ Ժ.

Ամատաօր Ծանօթութիւն պատմաբանին.

Մինչ գալստեամբս իմով Ծանեայ զաստուածահաճոյ գեղեցիկ վարս հարցն Ակվանու, վառեալ սէր իմ յարակցութեանց սոցա՝ սկսայ զելս հնարից որոնել՝ որ ըստ վախճանական դադար կենաց իմոց. ասա ունիլ կարացից։ Քանզի ի կողմանցն Ղրիմու, ուր առաքեալ էի յառաջագոյն, գվաթսուն և երկու ընտիր ձեռագիր մատեանս՝ ընդ ութն ձեռնասուն որդւոց իմոց, առ վեհազնեայ Աղայ Յովակիմի Ամասարանն ի Մոսկով։ Եւ զմնացեալ հարիւր, քսան և հինգ զտպեալ և զձեռագիր մատեանսն, զորս բերեալ էի ընդ իս ի Ղրիմու յԵրջմիածին։ Եւ տեսանելով իմ, թէ՝ հեռացեալ է ի սուրբ Երջմի-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ածնայ նախահոգութիւն, զորոց եթէ յաջողեցէ Տէր՝ յատուկ յանձնական պատմութեան իմում ունիմ պարագայիւք գրել, աստ միայն զհարկաւորսն տեղւոյս ծանուցից։

Բարուք համարեցայ, թէ՝ զգրեանսն իմ և թէ զայլ ինչս հասուցանել ի Սէվան, իբր ի գանձարան Աստուծոյ, վասնորոյ յանցեալ թիւ 1829. ՈՒՄԷՐ. Նոյեմբերի մէկ. հանդերձ ցուցակաւն առաքեցի՝ զմատեանսն իմ աստ ի Սէվան, որ ի կարգս տումարագրութեան սոյն օրագրութեանս, ունիմք ըստ կերպին գրել։ Բայց մեր տակաւին մնացեալ յանդամակցութեան Սինոդականացն Էջմիածնի, հազիւ յայս թիւ փետր. 25. եղեալ յանդամակցութենէ նոցա, գնացի նախ ի սուրբ Խորվիրապ, և ապա յուլիս ամսոյ մէկն 1830 ՈՒՄԷԹ եկի ի Սէվան ամենայն աղխիւք և ունեցելովք իմովք, և մէկ հարազատ ապասաւոր Էրզրումացի Յովհաննէս պետրոսեանիւ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ ասա յորդորական առ արկութեամբ նախայիշեալ սրբակրօն Յովհաննէս Առաջնորդի, հարկեցայ՝ զանձն սուրբ Ընապատիս ի գիր արձանացուցանել, ընդ նոսին և զմշտնջենական յիշատակին, ասա ի յօրագրութեանս կարևոր պարագայիւք ցուցանել, զի թէ՝ նիւթականքն ըստ հոլովման ժամանակաց անհետասցին, գոնէ ջերմեռանդ մատուցողաց եռանդքն առ Ստուած՝ անշիջանելի գոլոյ նշանքն ասա երևելով, և այլոց ապագայ բարեպաշտից առատաձեռնութեան յորդորք լինիցին։

Ոչ՝ անոլոյ արժան համարեցաք՝ յեռայսորիկ զյիշատակելիսն դասաւորել կարգաւ, նախ զՎկեղեցական սրբութիւնն, երկրորդ՝ զանօթսն։ Երրորդ՝ զանշարժ կայից զյիշատակին ամրական գրոց օրինակօքն։ Եւ չորրորդ՝ զմատեանսն յատկութեամբ, համարագրովք և մատուցողաց անուամբքն։

Իսկ զմնացեալ վաղանցիկ շարժական յիշատակին, յայլում օրագրութեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կարդադրեալ եմք ի գրել, նոյնպէս զտարբեկան զել և զմուտսն, որք ո՛չ գոյին մինչև ցայժմ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Սրբոյ-Ղ-ն և Անօր Սէվանոյ սոյբ Անապատին, ըէ սոսոր և յո՞ր շնորհեցեալ էին։

Նախ յաւուրս սրբոյն Մաշտոցի, յամի Տեառն 874. և Հայոց ՅԳԻ, Ազատ իշխանաց Իշխանն գայ յուխտ սուրբ Անապատիս, և ի վայելս օրհնութեան սրբոյն Մաշտոցի, բացի վեց գիւղեցն ի ժառանգութիւն աղօթաւորաց շնորհելոյն, որպէս ի տեղւոջ իւրում յիշեցաք. այլ և՝ ըստ վկայութեան Ղուկաս վարդապետի յօրինեալի զհին Հայաստանն, շնորհէ սոյն իշխանաց Իշխան զփրկական նշան Աստուածընկալ խաչին՝ Սէվանու Անապատին, որ է առաջին պրոյդ, ձիր և պարգև երկնառաք, որոյ շնորհօքն պահպանեն մենա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:03 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կեացքն յամենայն փորձութեանց դիւա-
կան շնչմանց։

Եր՛րորդ՝ որ հնագոյն աւանդութեամբ
հռչակեալ կայ յազգ մեր վասն Խադէոս
Առաքելոյն, թէ, զերկաթեայ տաշտն այն,
յորում սուրբ Աստուածածինն՝ ըստ մայ-
բական խնամոց սովորութեանն՝ լուանայր
զերեխայացեալն զՔրիստոս, զնոյն տաշտն
երեք խաչ իւր ձեռամբն կազմեալ է Ա-
ռաքեալն Խադէոս, յորոց զմինն նուաստ
պատմաբանս՝ յերկրին Ռուսաստանեայց,
ի գուբեռնին (ի նահանգին) Խէրսօնու ի
Գրիգորիպոլ. ՝այոց քաղաք, ուր ես ինքս
կացեալ եմ յաջորդ 16 տարի, և վայելէի
յիւրաքանչիւր տարի ի կայսերէն յանուն
նոյն Գրիգորիպոլ քաղաքի վանուցն երե-
քական հարիւր ռուբլի ռոճիկս։ Յիշեալ
զմի սուրբ նշանն անդ տեսեալ, երկրպա-
գեալ, և յայտնի հրաշիցն եմ ականատես
վկայ, ընդ իս ներկայ Եփրեմ Պաթողիկոսն
և Ներսէս Արքեպիսկոպոսն Աշտարակեցի
որ ի 1806 թուականին Փրկչի գտանելով

և նոցա անդ ի Գրիգորիպոլ, և զօրքն Ռուսաց գնային ի պատերազմք ի վերայ Օսմանցւոց, յիշեալ Պաթողիկոսն առեալ զնոյն երկաթեայ սուրբ նշանն, ի ձեռին և նովին օրհնեաց զզօրապետն և զզօրսն, որք անցանէին ի քաղաքէն Գրիգորուպոլու։

Եւ այն սուրբ նշան, յերկրէն Մոլտովայի մերազնեայք ի Տուպասար ասացեալ տեղին 24. կամ երբեմն 16 հատ քսան և չորս և տասն և վեց օր քառանթին պահելով՝ մեծաւ ջերմեռանդութեամբ գան յուխտ և յերկրպագութիւն, բազումք ժամանեալ բաղձանաց իւրեանց, վերադառնան ուրախութեամբ։ Որպէս և Հրէայ անդամալոյծ մի յաւուրս իմ եկեալ, մերով հրամանաւ մտեալ յեկեղեցին, զգիշերն օթագայեալ, յերկրորդ աւուրն զկնիր Արբոյ պատարագի յերեսի քալ արտասուօք մատուցեալ երկրպագեալ հրէային, և ի խաչալուայիցն օծեալ համեալ զանդամն իւր, նոյն ժամայն ակնարկեալ յեկեղեցին գտեալոցս, սկսան շարժել երակքն և

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:03 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անդամքն, վասնորոյ հաւատացեալ նոյն հրէայն մկրտեցաւ, կնաւ, և երկու արու, տասն, և տասն և երկու ամեայ զաւակօքն, բոլորովին հոգւով և մարմնով աւուղջացեալք, փառաւորելով զԱստուած և ըզհրաշագործ Սուրբ Նշանն նորին՝ գնացին ուրախութեամբ յերիսիս իւրեանց ի Վիշնով քաղաք, ուր այժմ Ներսէս Սրբազանն է Առաջնորդ։

Այն Սուրբ Նշան հռչակի այսպէս, թէ ի ցրուիլ Անի քաղաքին, բնակիչքն՝ ոլք ի Ղ՝ռիմ, ի Լ՝էհաստան և ի Մ՝օլոաւիայ սփռեցան, ի կողմն Վիլիու գնացող հայոց քահանայք, աթոռակալք և երեսփոխանք, զհետ իւրեանց տարեալ են ի Վելի քաղաք, և զկնի անցանել Հայոցն այնոցիկ ի սահմանս Ռուսաց յաւուրս Յովսէփ Արքեպիսկոպոսին Արղութեանց, տարեալ են և զՍուրբ Նշանն զայն ընդ ինքեանս ի Գրիգորիպոլ, ուր շինեալ զնոր քաղաք և զեկեղեցիս, եդեալ են յԱւագ եկեղեցին Նկատարինեայ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Շինուածք Սուրբ Խաչին է պարզ թխագոյն երկաթ, կէս Ասուսաց կանգնաչափ, առանց այլ ինչ զարդարանաց. ձևակերպութեամբն յարև նման աստ ի Էվան գտանեցեալ Սուրբ Նշանին, բաց յսկանց սորին, զի նա զոչինչ զարդս ունի յինքեան, բայց ժողովուրդք զտուփ նորին զարմանալի ճարտարութեամբ, գեղեցիկ յօրինուածովք, սատափապատ արարեալ են. ամենայն վերապատուութեամբ պահպանեն զնա ի մէջ Նշկեղեցւոյն, ի Սեղան սրբութեան, որպէս աստ ի Էվան ունին ի Սուրբ Սեղանոջն։

Արդ լինելով իմ բաղդաւոր, որպէս ի վեր անդր գրեցաւ, որ ի 1828 օգոս. ամսոյն գալով իմ աստ ջերմեռանդ կարօտիւ մատուցի զուխտ և զերկրպագութիւն իմ երկրորդ Սուրբ Նշանիս այսորիկ, յայնմ օրէ մինչև ցայժմ հետաքննին եմ գիտել զուստն սորին և կամ թէ երրորդն արդեօք ո՞ւր իցէ այժմ։ Ս ան սորին, որ գտանի ի Էվան, զայս ի հնագունից

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընկալայ զծանօթութիւն, զոր գրեմ արդ։

Ի նախկին Լուսաւորչէ մերմէ ի Թադէոս Առաքելոյ ձեռակերտեալ յերից հրաշալի յերկաթեայ խաչից և մինն որ աստ ի Էվանէ, և կոչի Պոթայ Սուրբ Խաչ կամ Սուրբ Նշան, վասն լինելոյ նորա երբեմն ի կողմն Պեղարքունւոյ ի Պոթ անուանեալ գեղջ, ընդ ձեռամբ իշխանի Պոթ գեղջ, յորմէ ելանէ իշխանաձուկն։

Զանգի աւանդիւ ասացեալ լինի, թէ երբեմն ի գաւառն Պոթայ մահտարաժամ պատահեալ, Իշխան գեղջն խնդրանաք զՍուրբ Նշանն տարեալ է անդ, և զկնի ապաքինութեան ախտին, բռնի արգելեալ է ի գիւղն իւր Իշխանն զՍուրբ Նշանն, յերկար ժամանակ, որով կոչեցեալ է Պոթայ Սուրբ Նշան, ապա առաջնորդ ժամանակին գնացեալ, իբր բռնի առեալ և բերեալ է ի Լանս Կրօնաւորաց։

Պարէեալ ի ժամանակս Շամախեցի Յակոբ Կաթողիկոսի տարեալ են զայս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սուրբ Նշան յԷջմիածին, զի մի՛ հնասցէ ի մխիթարութիւն ողորմելի վասն Գրիգորոսի կամաւոր աղքատացելոցն, որպէս ասովորութիւն է Սուրբ Էջմիածնի կառավարչացն զայլ վանօրայսն խափանել, զի մի միայն Էջմիածինն փայլեսցի, ոչ թէ ղբպրութեամբ և իմաստից շնորհօք, այլ հարստութեամբ և սուրբ մասանց կուտակմամբքն։ Վասնորոյ զՍուրբ Լուսաւորչայ Էջն ի Խոր Վիրապու՝ զՍուրբ Յակոբայ Էջն յԱրկուռուոյ, և զՍուրբ Գեզարդն ի բուն վանուց իւրոց, և զՀռիփսիմեանց Մասունսն ամրափակեալ են ի մէջ Էթոռոյն և զիսկ վանսն նոցին, որպէս գերճիթս մրգապահաց թողեալ են անխնամ։ Բայց սոյն Սուրբ Նշան շնորհիւ իւրով ինքնին ազատեալ է ի գերչաց իւրոց, քանզի յետ ասանելոյ նոցա զսա անդ, անկեալ ի մէջ գեղջ և Էթոռոյն զօրեղ մահտարաժամ մի, և երկուցեալ գերողացն առաքեն ի փառաքար գիւղն զայս Սուրբ Նշան, և անդ սկսեալ մահ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տարաժամն, տեսլեամբ յայտնեալ Ծերունւոյն միոյ, մինչ ոչ տարցեն զիս ի տեղի իմ, ուր կարօտքն իմ հսկեն անդադար, ոչ լինի դադարումն փորձութեան դաւառացն այսոցիկ։ Ծերունին պատմելով բազմաց, վճռեն հանդիսաւոր պատուով, որպէս զտապանակն առաջին, բերեալ յանձնեն անապատաւորացն և ապա լինի զրաւ մարդածախութեանն այնմիկ։

Այլ առաւել քան զսոյն հրաշագործութիւնն Սուրբ Նշանիս, ասացեալ է զկնի Մխիթար Եպիսկոպոսի պատահել դիպուածոց և ելուզակացն, որք ի պատառիլ սառինն ընկղմեցան որպէս կապար ի ծովն Սէվանու։

Ըստ պատմութեան Ծերունի միաբան Նոսեցի Մկրտիչ վարդապետի, Ժնի գեղջ Տանուտէր Յոհանի որդի Գրիգորն անողջանալի ցաւով իբր հոգևոր անկեալ ի մահճի, զայս Սուրբ Նշանն ի ներկայացուցանել հոգևարքք Գրիգորին, իսկ և իսկ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ի յուշ իւր եկեալ, և յերկրորդի օրն ըզ-
հետ վարդապետին յեկեղեցին Ռժնեոյ
դպրութիւն արարեալ ի ժամ պատարա-
գին։ Եւ զայս այսպիսիս հաւատարիմ
պատմողք բազումք են, մեք թողաք հա-
ւատով յուխտ և յերկրպագութիւն մա-
սուցողաց, վասն զի ոչ հաւատն սպառի
յաշխարհէ, և ոչ խաչի զօրութիւն, ընդ
օրում, եթէ՝ է, միշտ ներգործէ։

Մեզ միայն է անլուծանելի, թէ՝ ար-
դեօք ուստի՞, ե՞րբ և ի ձեռն որոյ՝ այս
Աստուածային գանձն եկեալ ի՞նչ յարժա-
նաւոր տուն և ի պատշաճ յարկ բնակու-
թեան իւրոյ, ուր պաշտի արժանաւոր
փառօք ի հարազատ սպասաւորաց իւրոց,
որպէս արարիչն իւր՝ յանմարմին հրեշ-
տակաց, և սա իբր յանմարմնացելոց մի-
անձանց։

Հաւատեաւ ստուգեցաւ, զի երրորդ
Խաչն ընկերակից սոցա, է ի սահմանս
Հին-Նախիջևանայ, ի վանս Երինջակու
Սուրբ Պարապետի, որոյ առաջնորդն է

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մատթէոս Եպիսկոպոս՝ առ որ ինայ նուաստութեան իմոյ կիրք հոգւոյ, մինչ ի գնալ յերկրպագութիւն և նմա։

Երրորդ՝ մասունք նշխարաց Սրբոյն Յովհաննու Մկրտչի, զետեղեալ ի մէջ ականաւոր գեղեցիկ խաչի, և եղեալ ի մէջ երկփեղկեան արծաթեայ պատշաճ պահարանի։

Չորրորդ՝ մասունք նշխարաց մեծի առաքելոյն Պետրոսի, զետեղեալ ի խաչ գրակոնդիկոն, կամ կիտուածայօրինեալ՝ ակամբք զարդարեցելոյ։

Հինգերորդ՝ մասունք նշխարաց Սրբոյն Գէորգայ քաջամարտ զօրավարին, որ է զետեղեալ ի վերայ գեղեցիկ արծաթապատ Աւետարանի։

Վեցերորդ՝ երկու մասնատուփք արծաթեայ, յորոց միումն գոն երեք մասունք մանր նշխարաց Յովհաննու Մկրտչի։

Եօթներորդ՝ ի մէջ Չիփիշի գեղեցիկ ձեռաց խաչի միոյ, մասն կենաց փայտի, ի գոյից՝ Ամասիոյ և Մարավանու Յովհան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նէս Արքեպիսկոպոսին Սեբաստացւոյ, ինձ Մանուէլ վարդապետիս ժառանգութիւն մնացեալ՝ ընդ բոլոր գրեանց իմոց, և զայս Սուրբ Նշանն տեառնակիր ետու յիշատակ Սէվանու Սուրբ Ընապատին, ի 1830, Օգոս. 12. ձեռամբ հոգևոր որդւոյ իմոյ Դաւիթ Նահապետ Սուրենովի Ղրիմեցւոյ։

Ութերորդ՝ ևս նոյն Դաւիթ Սուրենովի անուամբ յիշատակ ետու՝ մէկ փոքր արծաթեայ տուփի մէջ զետեղեալ սրբոյն Գէորգայ մասն, հանդերձ մէկ արծաթեայ մատնատփով, և արծաթեայ Մեռոնի փոքր շիշով՝, որք և ի ցուցական ունին յայտնել։

Իններորդ՝ երկու ապանոս Գաւազան, փղոսկրեայ վիշապագլխովք, յիշեալ հանգուցեալ Յովհաննէս Արքեպիսկոպոսի և իմ Մանուէլ վարդապետիս յիշատակքն աստ, և մէկ զեբնոսեայ վիշապաձև գլուխ գաւազանի, չորս զարձոթ նոր շուրջառք, և երկու շտոփայ սեղան ծածկոց ի գալն իմ աստ ձևեալ կարել ետու նոյնպէս յիշատակ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ըստ որում ի գալն իմ աստ ի Սուրբ անապատն Սէվանու, սոյն ի ներքոյ նշանակեալ թիւ, Յուլիսի մէկէն, ուչ գտի զանցելոց պատմութիւնն սոցա, ուրեք յօրագրութիւնն գրեալ. առաջադրութեամբ ներկայ առաջնորդ հեզաբարոյ Յովհաննէս վարդապետի՝ աշխատասիրեցաք ձեռամբ մեր գրել՝ մեզ կարևոր եղեալն մինչև աստ։ Յետ այսորիկ յանձնեցաք նախայիշեալ Ընտօն շնորհունակ աբեղային Տփխիսեցւոյ՝ գրել զանօթն յետ Սրբութեանց, զանշարժ կալուածոց զամրագիրսն, և ըզբոլոր մատենից զցուցականն, ըստ իմ կարգադրութեան։

Զանգի վասն ծերութեան և տկարութեան իմոյ, մնացելոցն ներումն խնդրեալ ի հարց և եղբարց՝ աստ աւարտումն արարի բանից իմոց։

Ն-ապատգոյն Ծատայ Մանո-էլ
վարդապետ Հահինով Ակ-ի-շեանցի։
1830. Սեպ. 12.

ի յանապատն Սէվանու։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:56 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՎԻՄԱԳԻՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՏԱՃԱՏԱՑՆ Ս. ԱՆԱՊԱՏԻՆ ՍԷՎԱՆԻՆ.

Ի վերայ սեան հարստաւորին կողմանն, յեկեղեցւոջն սուրբ Աստուածածնի, գրչի։

Յամի Ա. երորդի Ռ՝Գ. Ժամանելորդի. Ընորհօքն Աստուծոյ մեք հարապատ եղբարքս Խոճայ Սուլխանս և Ղալս ի քաղաքէն Տփխեաց Ազքէն Զիթաղեանց որդիք Խաղայի եկեալ ի Սուրբ Անապատս ի Սէվան Ծովապատ, զոր ի բազում ժամանակաց մեր կամաւ խոստացաք մեր ապրանաց շահն Ժամանորդ տանք Սէվանայ Անապատիս զոր շինեցաք Սուրբ Աստուածածինս Եկեղեցիս։ Յիշատակ մի արծաթի կանթէղ, Խաչ բուրվառ, սկիհ, յիշատակ հոգւոյս հօր մերոյ Խաղային, մօր Ռէկի Սուլթանին, եղբայր Պապի, Ղորապին, քվերանց որդոց բաժինին։ Եւ միաբանքս խոստացան տարէն Գ.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ժամ մատուցել։ Պատարագք վարձս առ-
ցեն։

Ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ։

Ի վերայ ազգային անմոյ ապականեան գրեան
Աստուածաշնչի Տաճարին, արդարութեամբ։ (Որ-
պէս էրնի գտարն ազգանուագրութեանս յետոյ
են կցեալ ընդ անմոյն)։

«Զ՝նրհաքն Աստուծոյ նորոգեցաւ տա-
նիք սուրբ Աստուածածնի Եկեղեցւոյ, ի
Հայրապետութեան Տեառն Եփրեմի և
նորաօծ Յովհաննու Պատրուղիկոսի, յա-
ռաջնորդութեան Յոհաննէս վարդապե-
տին, և աշխատանաք բոլոր միաբանու-
թեանց, մանաւանդ՝ Պարապետ վարդա-
պետին, որ ի շինութեան մասին սպանաւ
յայլազգեաց ի ժողովարարութեան, որ ե-
լեց վանս սգով, որք ընթեռնոյք, ողորմի
ասացէք։ Յամի Տեառն 1832, և ի թուա-
կանութեանս ՌՄԶԱ։» (Որպէս ասա-
ցին ի միաբանութեանս, սպանեալ է գոյն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պարապետ վարդապետն ի կողմանս Շաքուոյ յանազգակաց, ընդ աշխարհական սպասաւորին Յամաքարերդցւոյ)։

Ի վերջոյ փայտէոյ սեռանն գտանին նոյն Ներկեղեցւոյ, որ գրեալ է ի վերջոյ ընդնոյ և կոտրեալ է ի նա։

"Յամի Տեառն 1836։ Ուրոգեցան ի հիմանէ գաւիթս սուրբ Աստուածածնի, և մէկ մեծ մառան . . . . չորս օդայ, մէկ երկար քուչայիւ, արդեամբ և ծախիւք Լմեցի ծերունազարդ ի Քրիստոս հանգուցեալ Պետիաննոս ճգնազդեաց վարդապետին, որ նախ քան զվախճանն իւր՝ կտակաւ՝ աւանդեաց զծախսն այսոցիկ միում միաբանից անապատիս Ամկողայոս վարդապետին, գիտութեամբ առաջնորդի տեղւոյս Յոհաննէս վարդապետին և բոլոր միաբանիցս, որ և աւանդեցաւ օգնականութեամբն Աստուծոյ և ձեռնտուութեամբ բոլոր միաբանիցս։"

Ամկողայոս վարդապետ Պոլսէսեան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ղէց նմին գրեալ է ըստ այնմ,

«ԽԱՉԱ * ՊՍԱԿ

«Կայսրն Ռուսաց Նիկոլայ Պաւլովիչն եկն յաշխարհս մեր ի Հայաստան յամի Տեառն 1837 և եմուտ ի տուրբ Էջմիածինն ի Հոկտեմբերի 4.— և ի 5 սոյն ամսոյս՝ յԵրևան, և ի 6ն ի մուտս արեգական յաւուր չորեքշաբաթի՝ էանց հանդէպ նաւահանգստի Ընապատիս օթևանս արարեալ ի գիւղն Զիբուխլու մէկ գիշեր, և ասաի ի Տփխիս քաղաք, և անտի ևս էանց գնաց խաղաղութեամբ յաթոռն իւր ի Ս. Պ. բուրգ։»

Նիկ. վարդապետ Ռովսէսեան։

Ուսոյցի ուսմունքեան դրան գաւրին նոյն էկեղեցւոյ է վերայ ուրմոյ՝ ուսմունքեան հիւսիսակողմեան սենեկաց մեջ։

«Ը նորհիւն Աստուծոյ շինեցան սենեակքս արդեամբք Տփխիսայ Հայոց ժո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զովրդոց, ձեռնտուութեամբ Տեսոն Յովհաննու Կաթուղիկոսին, յառաջնորդութեան բնիկ միաբանի տեղւոյս Յովհաննէս վարդապետին Ղազախեցւոյ, աշխատութեամբ միաբանից տեղւոյս. ՈՒՄԶԻ։ ,,

Ի ներքոյ ոչնմանեան լուսամարդ նոյն պատճառին, արդարոսաց։

''Յամի ՌՃԻԴ թանարորդի, շնորհօք Աստուծոյ, մեք հարազատ եղբարքս Սուլխան, Օսոյս ի քաղաքէն Տփխեաց, ազգէն Զիթաղեանց, որդիք Թաղայի, որդոյ Միրվէլոյ, եկեալ ի սուրբ Անապատս Սէվան տեսեալ զՍուրբ Աստուածածնի Դկեղեցիս, զոր շինեալ յիշատակ. մեր ապրանաց շահի Թանորդն տալ զտեղի բնակողաց, և միաբանքս խոստացան տարէն Դ ժամ մատուցանել, սուրբ Հատկին, Վարդավառին, Ջրօրհնեաց տօնից։ Այս եղև ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ։ Առաջնորդ Մխիթար եպիսկոպոսի. Դարսեղ վարդապետ հանդուցելոյ։ ,,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կէց վերնոյս գրեալ է։

«Շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաւ Եկեղեցիս իւր կնածոնին*), ի թվին ՌՃԶԹ, ի Հայրապետութեան Տեառն Ղազարի, և առաջնորդ Մարտիրոս վարդապետի։ Աստուած ողորմի աստացէք տուրք և ողորմութիւն տվողացն սուրբ տանս, և աշխատողաց. և Մարտիրոս վարդապետի որդի Աթապէկն, որ տվաւ Թումման ողորմութիւն։ Ողորմեսցի ձեզ Աստուած։»

Ի վերայ հարաւային որմոյ առաջի Հատէլոց Եկեղեցւոյն, արտաքոստ, ի վերոյ փան ըզ-պառանն՝ ընդաջմէ։

«Շնորհօք և ողորմութեամբ Ամենազօրին Աստուծոյ, Մեք երեք հարազատ եղբարքս Սուլխան, Հալ և Հօրապ տվաք նորոգել սուրբ Եկեղեցիս յիշատակ մեզ և մեր ննջեցելոցն, Հօրն Թաղային և մօրըն Ռէկի-Սուլթանին, հանգուցեալ եղ-

(*) Զնշանակութիւն բառիս ոչ իմացաք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բօրն Պապին, և ամենայն ազգայնոց. այլ և խոստացաք շահ ստացուածոց մերոց, ընդ սմա տասանորդեսցուք: Եւ Մխաբան սուրբ ուխտիս խոստացան՝ յետ ուխտիցն, աւուր տօնի սուրբ Կարապետին պատարագ մատուցանել վասն մեր: Նորոգեցաւ ի թուականիս Հայոց ՌՃԿ: Ի Հայրապետութեան Տեառն Փիլիպպոսի, առաջնորդի Մխիթարի: ,,

Ովքեայ հոյ Աթենք՝ հիշատակէք ուշանելեայ խաչի, ոչ ցանգ պնի ի վերայ անղանոյ ոռ-ջի Աստո-ածածնի Եկեղեց-ոյն:

''Սուրբ Խաչս յիշատակէ Զիթաղ... Սուլխանին, իւր եղբայր Օ՝ալինին, Պապինին, Օ՝ուրաբին, և իւրեանց ծնաւղացըն, հօրն Թաղուն և մօրն Ռէկի Սուլթանին. ի դուռն Սէվանայ Անապատին: Ո՛վ ոք էս յիշատակս յափշտակէ, դուրս տանէ, մասն Յուդայէ, Պայենի, առցէ: Թվին. ՌՃԵ: ,,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ։ Ի Գաւթի սուրբ Աստուածածնի Եկեղեցւոյն, առաջի դրան Տաճարին առընթեր միմեանց գտանին գերեզմանք սոյն բարեպաշտ չորից եղբարցս Զիլթաղեանց։ Ի վերայ միոյն տեսանի թիւրս ՌՃԼԳ, իսկ միւսոցն թուականք, հանդերձ տապանագրօքն են անվերծանելիք. թէպէտ քանի մի ամօք յառաջ լեալ են չ'եղծեալք և ընթեռնլիք, որպէս պատմեն աստ միաբանք սուրբ ուխտիս Սէվանայ։ Ցաւուրս յիշատակաց մեռելոցն ի Հինգ Նաւակատին յետ կենարար պատարագացն, սրբազան հանդիսիւ, անխափան օրհնեն աւանդաբար ի նախնեաց սրբոյ մենաստանիս՝ զգերեզմանս սոյն բարեպաշտ եղբարցն, որք այսր յիշատակութեանս աղագաւ իսկ թաղեալ իցեն ի տեղւոջս այսմիկ, բերել տալով զմարմինսն ի Տփխիսայ այսր, որպէս մարթ է համարիլ, ըստ ցուցման սոյն արձանագրութեանցս, որք ի նոյն միտս յատկացուցանեն զաւուրս յիշատակաց նոցին և մատուցման պատարագացն, զիարդ և հարք վանուցս զսոյն պարտախոստմունսն յայնմհետէ մինչև ցայժմ շարունակեալ են առանց զանցառութեան արդարութեամբ, և արդէն ևս շարունակեն նմանապէս անմոռաց պահպանելով զպայմանս սրբութեան նախնեացն իւրեանց, զոր ընկալեալ են ի Զիլթաղեանցն, և չմոռանալով զերախտիս բարեպաշտիցն

այնոցիկ, վասն տանս Աստուծոյ, և բաց յայսմանէ յամենայն կիւրակէս զկնի պատարագին՝ լեալ է պարտականութիւն պատարագչացն՝ միշտ օրհնել զայսոսիկ գերեզմանսն, սրբազան պատիւ մատուցանելով նոցա։ Որպէս լուայ, զտանին ի Տփխիս քաղաքին ազգատոհմք Զիթաղեանց բարեպաշտ և բարերար անձանցս այսոցիկ և են պատուաւոր և յառաջադէմ վաճառականք, և հանգոյն նախնեացն իւրեանց ունին յինքեանս զկայծ եռանդեան անշիջանելի առ սուրբ Անապատս Սէվանայ։

Ներկա աքէղայ Ղ. ալալէանց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-08-02 05:48 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-08-02 05:47 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN
3 9015 04147 1734

Generated on 2016-08-02 05:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2016-08-02 05:46 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015041471734
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN